Ե՞ՐԲ Է ԿԱՌՈՒՑՎԵԼ ԳՆԴԵՎԱՆՔԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Գնդեվանքը գտնվում է Արփա գետի ձախ ափին, Ազիզբեկովի շրջանի Գնդեաղ գյուղից հարավ-արևմուտք։ Ժամանակին այն եղել է Հայաստանի նշանավոր հոգևոր ու մշակութային հաստատություններից մեկը։ Այժմ պահպանվել են գլխավոր եկեղեցին, գավիթը, շրջապարիսպները և միաբանության բնակելի տների ավերակները։ Եկեղեցին քառախորան, գմբեթի կլորավուն թմբումով շինություն է։ Պատերը զարդարված են երկուական որմնախորշերով. քառախորան եկեղեցիների այս տիպն առաջ եկավ IX—XI դդ. Սյունիքի Ճարտարապետական դպրոցում և հանդիպում է հիմնականում երկու տարբերակով՝ երկու և չորս ավանդատներով, որոնցով և պայմանավորված է քննվող եկեղեցու արտաքին պատերի հորինվածքը։

Գնդեվանքի եկեղեցին ունի բեմական խորանի կողքերին տեղադրված երկու ավանդատուն, որոնց լայնությունը թեթևակի զիջում է հյուսիսային և հարավային թևերի մեծությանը։ Դրա հետևանքով արտաքուստ նկատելի է եկեղեցու ներքին խաչաձև հորինվածքը։ Գավիթը թաղածածկ է։ Հյուսիսային կողմում կան երկու սենյակներ, որոնք Ս. Մնացականյանի կարծիքով եղել են դրատներ[1]։

Ճարտարապետական արժանիքներից բացի, եկեղեցին ունի նաև մեծարվեստ որմնանկարներ (նկ. 1)։

Նկ. 1. Որմնանկար։

Նկ. 2. Սոփի իշխանուհու արձանագրությունը։

[1] С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, стр. 26.

Ստեփանոս Օրբելյանի կարծիքով, վանքը հիմնել է Սյունյաց իշխանուհի Սոփիան. «Եւ Սոփիա տիկին՝ կին Սմբատայ աստուածապահ տեառն Սիւնեաց և դուստր Գրիգոր Դերենկի շինեցի զեկեղեցիս ի յիշատակ հոգւոյ իմոյ և յարևշատութիւն իշխանաց իշխանին Սմբատայ և որդեկաց մերոց և զարդարեցի զսա մեծածախ սպասիւք և ետու զերկու գիւղս ժառանգութիւն սմա զոր մի ոք իշխեսցէ խախտել կամ հանել ի սուրբ եկեղեցւոյս ապա թե ոչ անլուծանելի նզովիւք անիծեալ լիցի յԱստուծոյ և յաստուծազումար սրբոցս մատանի Լ,ր անակն Վայոց ձոր, շինեցի զսա եւ եղի ի վերայ»[2]։

Գնդեվանքի արևմտյան պատի վրա մասնակի տարբերություններով վիմագրված են ընդգծված բառերը (նկ. 2)։

Նկ. 3. Սոփի իշխանուհու շինարարական արձանագրությունը։



Նկ. 4. Եղիշայի արձանագրությունը։

ԼՄԱՏԱՆԻ
ԷՐ ԱՆԱԿՆ Ե-
ԴԻՐ ՍՈՓԻ ՍՐԻ-
ԻՆԵԱՑ ՏԻԿԻՐՆՇ
. . . . . .

Ինչպես հայտնի է, նույն բովանդակությամբ կիսաեղծ արձանագրություն էլ կա եկեղեցու մոտ ընկած քարերից մեկի վրա.

...ԱՆԱԿՆ
ԱԿՆ ԵԴԻ ՍՈՓԻ ՍԻ-
ԻՆԵԱՑ ՏԻՐԿԻՆՇ... ԱԻՈՐԵ[3]

---

2 «Պատմութիւն Նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 262—263 (ընդգծումը մերն է—Ա. Մ.)։

3 «Դիվան հայ վիմագրության», պրակ III, Երևան, 1967, էջ 13։

Օրբելյանի բերած արձանագրությունը թվական չունի։ Այդ բացը պատմիչը լրացրել է այլ տեղեկությամբ։ Մանրամասն նկարագրելով Սոփի իշխանուհու շինարարական ձեռնարկումները, նա գրում է, որ վանքը հիմնելու համար իշխանուհին այստեղ է բերել արհեստավորներ, քարգործ վարպետներ և նկարիչ Եղիշային[4]. «Կանգնէ զտունն Աստուածոյ և նկարակերտ յօրինուածօք զարդարեն զառաստաղս և զորմունս նորա»։ «Եւ շինէ զգիւղն ի վերոյ վանիցն ի գլուխ քարին»։ «Եւ այս լինէր ի թուականին հայոց 385» (936)[5]։ Թե ինչ սկզբնաղբյուրից է պատմիչը վերցրել այս թվականը, մնում է անհայտ, որովհետև եկեղեցու արևմտյան պատի հարավային անկյան մոտ գտնվող, այս փաստն ավանդող շինարարական արձանագրությունը թվական չունի (նկ. 3).

ԵՍ ՍՈՓԻ ՍԻՆԵԱՑ ՏԻ-
ԿԻՆ ԴԵՐԱՆԿԻՆ (Կ) ԴՈՒՍ-
ՏՐ, ԿԻՆ ՍՄՊԱՏԱ, ՈՐԴԻ
ԱՇՈՏԻ ՍԻՆԵՑ ԻՇԽԱՆ-
Ի ՇԻՆԵՑԻ ՁԵԿԵՂԵՑԻՍ[6]...

Մասնագիտական գրականության մեջ ընդունված է Գնդեվանքի եկեղեցին թվագրել 936-ով, որը, սակայն, ժխտվում է Գնդեվանքը նկարազարդող Եղիշայի անվամբ հայտնի, եկեղեցու հարավային պատին փորագրված մեկ այլ արձանագրությամբ (նկ. 4)։

ՅԶ (931) ԹՐՈՒԱՅԿՐԱՆԻՍ ԵՍ Ե-
ՂԻՇԱ Ի։ Զ(6)։ ԿԱ-
ՐԳԻՍ ԱՌԱ-
Զ ԱՐԱՐԻ ԱՌ-
ԱՌԱՋՆՈՐԴՈՒ-
ԹԵԱՄԲ ՍԱՐ-
ԳԻՍ ՔԱՀԱՆ-
ԱԻ, ՈՐ ԿԱՐԴԱ-
Ք ՏՐ ՈՂՈՐՄ
Է ԱՍԱՑԷՔ

Այս արձանագրությունը հրատարակել են Քաջբերունին, Ալիշանը, Սիսուևը և Ս. Բարխուդարյանը։ Քաջբերունին անդրադարձել է միայն վանքի վրա եղած նորոգման նշաններին[7]։ Սիսուևը վկայակոչելով Ստ. Օրբելյանին, գրում է, որ արձանագրության և պատմիչի հաղորդած տեղեկությունները գրեթե համապատասխանում են[8]։ Սիսուևը պարզապես անտեսում է թվագրության խնդիրը։ Այս հարցին ըստ էության պատասխանում է Ալիշանը, որի ենթադրությամբ հիշյալ արձանագրությունը պատկանում է ավելի վաղ կառուցված շի-

4 Ստ. Օրբելյան, էջ 260։

5 Ստ. Օրբելյան, էջ 261։

6 «Դիվան հայ վիմագրության», պրակ III, էջ 14։

7 Քաջբերունի, Ճանապարհորդական նկատողություններ («Փորձ», 1877/78, էջ 354—355)։

8 «Материалы по археологии Кавказа», вып. XIII, М., 1916, стр. 149, 152.

նությունների մեկին՝ զանգակատանը[9]։ Ալիշանի այս կարծիքը հիմնված է Ջալալյանցի ու Քաջբերունու հաղորդած տեղեկությունների վրա, որոնք վկայում են, թե արձանագրությունը փորագրված է եղել զանգակատան պատին։ Ջալալյանցի ժամանակ զանգակատունը դեռևս կար, իսկ Քաջբերունու ժամանակ դմբեթն ավերված էր։ Խոսքը եկեղեցու վրա դրված ուշ շրջանի զանգակատան մասին է, որը 931 թ. թվագրվել չի կարող։ Արձանագրությունը փորագրված է եկեղեցու արևմտյան թևի հարավային պատին։ Ինչ վերաբերում է հին շինությունների գոյությանը, ապա այդ վարկածի պատճառը Ստ. Օրբելյանն է, որի հաղորդած տեղեկությունների համաձայն, մինչ այդ վայրում եկեղեցի կառուցվելը Սոփին այցելել է այնտեղ և տեսել ճգնավորներին, որոնցից մեկի՝ Գնդունու, անունով էլ վանքը կոչվել է Գնդեվանք։ Իրականում, սակայն, շինություններ չեն եղել։ Ճգնավորների գոյությունն ինքնին վկայում է, որ այդտեղ ոչ թե միաբանություն է եղել, այլ վայրի կենցաղով ապրող ճգնավորներ։ Վերջապես, 931 թ. արձանագրության հեղինակ Եղիշան, ըստ Օրբելյանի, հենց այս եկեղեցու կառուցման մասնակից է։ Ս. Բարխուդարյանն այս հարցին չի անդրադարձել, իսկ հիշյալ ու ժամանակակից հեղինակները որպես հիմք ընդունել են Ստ. Օրբելյանի հաղորդած 936 թ.[10]։ Եղիշայի 931 թ. արձանագրության առկայությունը եկեղեցու պատին մերժում է նրա 936 թ. կառուցված լինելու հնարավորությունը, քանզի այդ արձանագրությունը չէր կարող տեղավորվել գոյություն չունեցող շինության պատին։ Քանի որ արձանագրությունը շինարարական չէ, 931 թ. ևս չի կարող ընդունել որպես եկեղեցու կառուցման տարեթիվ։ 931 թ. ավարտված է եղել ոչ միայն եկեղեցու կառուցումը, այլև նկարազարդումը։ 931 թ. շինարարական աշխատանքների սկզբնավորման տարեթիվ էլ չէ, որովհետև առանց եկեղեցու տանիքի կառուցման նկարազարդումը չէր սկսվի։ Հետևաբար, եկեղեցու կառուցման և ավարտի ժամանակը պետք է թվագրել դրանից մեկ-երկու տարի առաջ, այսինքն 931 թ. հանելով այն տարիները, որոնց ընթացքում կարող էր ավարտված լինել նկարազարդումը։

КОГДА БЫЛ ПОСТРОЕН ГНДЕВАНК

АЛЕКСАНДР МАНУЧАРЯН

Резюме

Монастырский комплекс Гндеванк находится у левого берега реки Арпа, юго-западнее села Гндеваз. Комплекс состоит из одной церкви, притвора, крепостных стен и развалин жилых помещений.

---

9 Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 106։

10 Ս. Մնացականյան, Հայ ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 50, Գ. Գրիգորյան, Սյունիքի վանական կալվածատիրությունը XI—XIII դդ., Երևան, 1973, էջ 52—74, В. М. Арутюнян, С. А. Сафарян, Памятники армянского зодчества, Ереван, 1951, стр. 50, «Աղբյուրական հանգեստ», XXVI, էջ 8, О. Егиазарян, Памятники культуры Азизбековского района, Ереван, 1955, стр. 95.

Церковь имеет трехапсидную композицию, увенчанную куполом с круглым барабаном. Перекрытие притвора арочное. Интерьер расчленен двумя небольшими комнатами, в которых, по мнению исследователей, располагалась монастырская библиотека.

Согласно Ст. Орбеляну, церковь была построена сюникской княгиней Софией в 936 г. Для построения храма и его декоративной отделки она пригласила строителей и художника Егишу, который расписал плафон и стены. Сохранилась надпись художника Егиши, датированная 931 г. Наличие надписи 931 г. исключает возможность построения храма в 936 г. В специальной литературе построение Гндеванкского монастыря датируется 936 г. Однако эта датировка неточная. Судя по надписи Егиши, в 931 г. церковь не только была построена, но и расписана фресками.